

արկեալ ի պարանոցն երկաթ եւ ձայնէր երթալով առաջի նոցա . Տուն բացողին եւ գողոցն եւ մարդասպանիցն հալն այս է :

Շարաթ օրս (26 Յուլիս) : Երեկոյիս յառաջ քան զյետինքն վէզիրն եւ մուֆտին, էնկիչէր աղասին եւ տէֆտէրտարն, մեծ զատին եւ շէհր էմինին հեծեալ ի ձի եւ գնացեալ ի Ախըրզափուն, եկեալ մինչեւ ի Դումդափուն՝ որչափ որ տուն շինեալ կայր ի վերայ պարսպին որ նայէր ի ծովն, զամենեսեան աւերեալ հրամանաւ թագաւորին, ասելով թէ Պարիսպ ո՞ւմ է . եւ նոքա ասեն թէ Քոյ է . Ապա որ իմ է՝ զայս վասն է՞ր են շինեալ : Եւ հարցեալ ցմուֆտին թէ Պարտ է զայս առնել, եւ նա ասացեալ թէ Ոչ տան ձեռ գիրս մեր զայդ առնել, այլ արժան է քակել : Եւ այսպէս թէ որչափ մեծամեծաց տուն կայր՝ զամէնն քակեցին :

Կիրակի օր (27 Յուլիս) : Մօտ երեկոյիս եղիազար վարդապետն եկաւ ի Պուրսայու . և գնացաք ի հարսնիք Շէհրուն եղբօր Իպրահիմին :

Եւ օրս վէզիրն և յէնկիչէր աղասին ի շուրջ գալով մինչև ի յետիղուլան ի ծովեզրն ի վերայ պարսպին, թէ որչափ տուն կայր կու քակէին :

Բշի (28 Յուլիս) առաւօտուս գնացաք ի հարսնիք և ես ոչ գնացի հարսնառ ընդ նոսա, և որ եկին՝ պսակեալ գնա ի Սուրբ Գէորք, եւ նստաք անդ մինչ յերկուն, զի օրս եկին հրաւրեալքն եւ ոչ զիշերս՝ վասն պատրաստութեան մեր ի բռնաւորացն :

Գշի օր (29 Յուլիս) : Յաւուրքս այսոքիկ բազումս գանէր զքրիստոնեայնս պիղծ սըրազօլին անդէպ եւ ընդ վայր :

Օգոստոս ամիս օր Ուրբաթ : Լուսանայր օրս՝ վէզիրին փէշքէշ տվին եւ տէֆտէրտարին . եւ յորժամ տան զփէշքէշն, ասեն վէզիրին եւ տէֆտէրտարին